



Funded by the European Union



## Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

### ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: **Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ)** համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

### «ՄԱԳՆՈՆ» ԲԲԸ - ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

#### Կազմակերպության մասին




Գտնվելու վայր՝ Գյումրի  
Աշխատակիցների քանակ՝ 14-35  
Արտահանման քվոտա (%)՝ 20  
Հիմնադրման տարեթիվ՝ 1998  
Հիմնական շուկան՝ ՀՀ(Արցախ) և Վրաստան  
Հիմնական ապրանքատեսակներ՝ խաղահրապարակների, զբոսայգիների, մարզահրապարակների գույք և ֆիթնես սարքավորումներ (մետաղական կոնստրուկցիաներ)



«Մագնոնը» կոնստրուկցիոն մետաղական ապրանքների արտադրող է: Հիմնադրվելով 1998 թվականին սեփականաշնորհված ձեռնարկության հիմքի վրա՝ ընկերությունը ձևափոխել է նախկինում գոյություն ունեցող աշխատանքային տարածքը (սարքավորումներ, գործիքներ և ենթակառուցվածքային տարրեր, ինչպիսիք են շենքերը, ջրամատակարարումը և էլեկտրաէներգիայի համակարգը) և այն օգտագործում է որպես արտադրական տարածք: Ցավոք սրտի, ընկերության օբյեկտները համարվում են հնացած և կարիք ունեն կա՛մ վերանորոգման (շենքեր և պահեստային տարածքներ), կա՛մ փոխարինման (օդափոխության համակարգ, ջրամատակարարման ենթակառուցվածք): Սարքավորումները անսարք են կամ չեն վերանորոգվում՝ զբաղեցնելով աշխատանքային տարածքի մեկ երրորդը: Ավելին, պատշաճ ջեռուցման և ջերմամեկուսացման բացակայության պատճառով ընկերությունը չի կարողանում աշխատել ձմռանը: Էներգաարդյունավետության և իր անձնակազմի բարեկեցության խնդիրների լուծման շարժառիթներով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green)-ի շրջանակներում (2019-2024): Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2022-2023 թթ. իրականացված մոնիթորինգից հետո:

### ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գործողությունն իրականացվել է

# Նախագծի մոտեցումները

ՈԱՄԱ գնահատումը ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՈԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ հինգին, որոնք միջինից բարձր ծախսատարության առաջարկություններ են:

**ՈԱՄԱ տարբերակ 1: Աշխատակիցների շրջանում էներգաարդյունավետ վարքագծի ձևավորում:** Այս միջոցառումը կօգնի վերապատրաստել անձնակազմին, հատկապես գիշերային ժամերին, էլեկտրաէներգիայի սպառումը նվազեցնելու համար:

**ՈԱՄԱ տարբերակ 2: Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության (ՇՄԱԱ) կառավարման համակարգի և պլանների մշակում և իրականացում:**

**ՈԱՄԱ տարբերակ 3: Ինֆրակարմիր ջեռուցման համակարգի (ԻԿՋՀ) տեղադրում:** Այս միջոցառումը կապահովի էժան և արդյունավետ ջեռուցում աշխատանքային տարածքի համար:

**ՈԱՄԱ տարբերակ 4: Ֆոտովոլտային (ՖՎ) արևային վահանակների և ԻԿՋՀ-ով ջրի ջեռուցման արևային համակարգի տեղադրում:** Այս միջոցառումը կնվազեցնի էներգիայի օգտագործումը և կապահովի ընկերության էներգետիկ անկախությունը էլեկտրական ցանցից, կամ

**ՈԱՄԱ տարբերակ 5: Ֆոտովոլտային (ՖՎ) արևային վահանակների և արևային ջրի ջեռուցման համակարգի տեղադրում առանց ԻԿՋՀ:**

## ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

### Հիմնական ՈԱՄԱ գործողություններ

- ՏԱՐԲԵՐԱԿ 1** Աշխատակիցների շրջանակում էներգաարդյունավետ վարքագծի ձևավորում:
- ՏԱՐԲԵՐԱԿ 2** ՇՄԱԱ կառավարման համակարգի և պլանների մշակում և իրականացում:
- ՏԱՐԲԵՐԱԿ 3** Ինֆրակարմիր ջեռուցման համակարգի (ԻԿՋՀ) տեղադրում:
- ՏԱՐԲԵՐԱԿ 4** ՖՎ արևային վահանակների և ԻԿՋՀ-ով ջրի ջեռուցման արևային համակարգի տեղադրում:
- ՏԱՐԲԵՐԱԿ 5** ՖՎ արևային վահանակների և արևային ջրի ջեռուցման համակարգի տեղադրում առանց ԻԿՋՀ:

Ընկերությունը դիտարկում է ՖՎ արևային պանելների և ջրի ջեռուցման համակարգի տեղադրումը (ԻԿՋՀ-ով կամ առանց դրա)՝ հաշվի առնելով հզորությունը և առկա ռեսուրսները:

### Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՈԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ներդրում (Եվրո)	Խնայողություն (Եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Տարբերակ 1:	/	300	/
Տարբերակ 2:	3,000	10,000	0.3
Տարբերակ 3:	2,500	15,000	0.1
Տարբերակ 4:	45,000	7,500	6
Տարբերակ 5:	12,400	1,990	6.2

### Ռեսուրսների խնայողություն

ՈԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Նյութեր (տ/տարի)	Էլեկտրաէներգիա (կվտժ/տարի)
Տարբերակ 1:	/	3,700
Տարբերակ 2:	0.5	1,500
Տարբերակ 3:	/	/
Տարբերակ 4:	/	96,750
Տարբերակ 5:	/	24,760

### Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՈԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ընդհանուր CO <sub>2</sub> (տ/տարի)
Ընդհանուր:	39

Մեր ընկերությունը դժվարությունների էր բախվում էլեկտրաէներգիայի ավելորդ օգտագործման, ինչպես նաև ջերմամեկուսացման և ջեռուցման բացակայության պատճառով, հատկապես ձմռանը: ՈԱՄԱ ցուցադրական ծրագրի շնորհիվ մեր ընկերությունը սովորեց համակարգված կերպով բարելավել իր էներգաարդյունավետությունը և ներդրումներ կատարել մեր աշխատակիցների անվտանգության և բարեկեցության համար: Քանի որ գործարանը նախատեսում է ձեռք բերել անհրաժեշտ միջազգային հավաստագրեր՝ իր արտադրանքը Հայաստանից դուրս արտահանելու (և հետևաբար՝ ավելացնելու արտադրական հզորությունը) իրավասու լինելու համար, ՈԱՄԱ նախագիծը մեզ ոգեշնչել է նոր զարգացումներով հանդես գալու ՈԱՄԱ միջոցառումների ապագա իրականացման վերաբերյալ, - ասաց գործադիր տնօրեն տիկին Աստղիկ Հովսեփյանը:

ՈԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում «Մազնոն»-ը միացել է «ՈԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՈԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելե՛ք՝ [www.eu4environment.org](http://www.eu4environment.org)

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Պրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:



ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման  
Կազմակերպություն  
տիկին Տառյանա Չերնյակսկայա  
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար  
Հեռ: +43 1 26 0 26 5520  
Էլ. հասցե: [t.chernyavskaya@unido.org](mailto:t.chernyavskaya@unido.org)



Կոնտակտներ:  
Տարածաշրջանային Բնապահպանական  
Կենտրոն Կովկաս  
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ  
Ալգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան  
Կայք: [www.rec.am](http://www.rec.am)  
Հեռ: +374-115-75-148